Государственное учреждение
"Бюро по реализации
градостроительных программ"
Министерства градостроительства
Республики Армения

State Agency "Urban Development
Projects Implementation Unit"
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

Հայաստանի Հանրապետության
Քաղաքաշինության նախարարության
«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման
գրասենյակ» պետական հիմնարկ

0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Goverentment House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

07.08.14 N ՀԾԻ-570-14

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Ա. Արզումանյանին

Հարգելի պարոն Արզումանյան,

ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի <<Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> թիվ 667-Ա հրամանով հաստատված՝ էլեկտրոնային ձևով իրականացվող բաց ընթացակարգի գնման հրավերի օրինակելի ձևի 3.2-րդ հավելվածով մասնակիցները հայտ ներկայացնելու ժամանակ տալիս են հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, որում պետք է նշեն **«համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները)»:**

Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 81-րդ կետի 2-րդ ենթակետի. « *... առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը ... ներկայացնում է նախկինում <u>կատարած պայմանագրի</u> (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ <u>պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը</u> հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.*»

Գնումների գործընթացն իրականացնելիս գործնականում առաջանում են մի շարք վիճելի հարցեր՝ պայմանավորված վերը նշված դրույթների կիրառմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների բնագավառում լիազոր մարմինը համարվում է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ գնումների գործընթացը սահմանված

Հայաստան... ...թյան
Ֆինանսն... ...րության

«11» 08 20014 թ.

Մուտք թիվ 18745

պահանջների պահպանմամբ իրականացումն ապահովելու համար խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետներում պարզաբանել՝

*1.* Հայտարարության մեջ նշվող ***«համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները)»*** հասկացության ներքո արդյո՞ք պետք է հասկանալ, որ մասնակիցը պարտավոր է նշել պայմանագրի առարկան (օրինակ՝ *Երևանի թիվ 100 դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ*), թե՞ բավական է միայն նշել աշխատանքների բնույթը (օրինակ՝ *հիմնանորոգման աշխատանքներ*):

*2.* եթե նշված հայտարարության մեջ մասնակիցը չի նշել համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները), ապա հայտը արդյո՞ք ենթակա է մերժման, թե ոչ:

*3.* ընտրված մասնակիցը մասնագիտական փորձառության որակավորումը հիմնավորելու համար արդյո՞ք իրավունք ունի ներկայացնել նաև այնպիսի պայմանագիր, որը չի նշել հրավերի օրինակելի ձևի 3.2-րդ հավելվածով ներկայացվող հայտարարության մեջ, թե՞ պարտավոր է ներկայացնի միայն այնպիսի պայմանագիր, որը նշել է նշված հայտարարության մեջ:

*4.* եթե մասնակիցը նախկինում իրականացրել է Պայմանագրի միայն մի մասը, ապա մասնագիտական փորձառության որակավորումը հիմնավորելու համար մասնակիցն արդյո՞ք իրավունք ունի գնահատման ներկայացնել Պայմանագրի կատարված միայն մի մասը, թե գնահատման առարկա է համարվում ամբողջ պայմանագիրը, և մասնակիցը պետք է ներկայացնի միայն այնպիսի պայմանագիր, որը կատարվել է ամբողջությամբ (օրինակ՝ երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքված շարունակական աշխատանքների պայմանագիրը, որի մի մասը դեռևս չի կատարվել):

*5.* եթե ընտրված մասնակիցը մասնագիտական փորձառության որակավորումը հիմնավորելու համար ներկայացնում է այնպիսի պայմանագիր, որը չնայած կատարվել է ամբողջությամբ և պատշաճ որակով, սակայն թույլ է տվել պայմանագրի կատարման ժամկետների (միջանկյալ կամ վերջնական) խախտում, ապա արդյո՞ք մասնագիտական փորձառության որակավորումը ենթակա է գնահատման բավարար, թե ոչ:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Հ. Սարգսյան

Կատ. Իրավաբանական և գնումների
կազմակերպման բաժին
հեռ. 56-43-16